

ւայ թէ Նախավկայի վանքի առաջնորդին եւ ժողովրդեան մէջ հին վէճ մը գոյութիւն ունեցած է. յատկապէս թեմին սահմաններու տարածութեան եւ առաջնորդին եւ ժողովրդեան փոխյարաբերութեան մասին: Այս խնդրով զբաղած էր նաեւ Մելքիսեդեկ կաթողիկոս. ունիմ աչքի առաջ անոր մէկ կոնդակն սկզբնագրին մէջ¹, գրուած 1614, ապրիլ 28ին. ուր կը գրէ կաթողիկոսը յետօրհնութեան. «ի սուրբ եւ ի հռչակաւոր, յանունի եւ յակնաւոր վանքն՝ ի Նախավկայն եւ ի սահմանեալ թէմն եւ վիճակն իւր բոլորովին՝ ի Զուղայ եւ իւր վանքն, ի յԱտապատ եւ իւր վանքն, ի Շամբ(եւ)իւր վանքն, ի յԱրաբք եւ ի Զաղաց տեղն եւ իւրեանց վանքն, ի Մահլազան եւ ի Ղաւրուին, ի Կրէրէց. եւ այլ ամենայն թէմն եւ ի վիճակն իւր բոլորովին». որուն մէջ կը յայտարարէր. «Գիտութիւն լիցի ձեզ ամենեցուն ... վիճակ Մաղրթարա վանուց սուրբ Ստեփանոս նախավկային, Զուղայոյ, յԱտապատայ, ի Շամբի ձորոյ, Մահլազանայ, Ղուրուխոյ ժողովուրդք առ հասարակ. տեսաք զառաջի հայրապետաց հաստատած բանն, մեք այլ վերջստին հաստատեցաք: Զամենայն աւրինաւոր հաս եւ իրաւունքն լիով եւ անթերի տուք ի ձեռն Պետրոս արհեպիսկոպոսիդ՝ զմահու եւ զկենաց. զտեառնական եւ զսրբայնուէր, ըզմատաղ կենդանեաց եւ զան-

¹ Ձեռ. վիճենայի Թ. 694: